ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԴԵՐԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ /1941-1945թթ./

Հայրենական մեծ պատերազմի առաջին օրերից սկսած մինչև նրա հաղթական ավարտը գրականությունը և արվեստը հսկայական դեր խաղացին հայրենասիրական դաստիարակության, հայրենիքի պաշտպանության համար հայ ժողովրդի համախմբման գործում: Հայրենիքի համար այդ ծանր օրերին գրականության և արվեստի գործիչներն իրենց ստեղծագործությունների առանցքային թեման դարձնելով հայրենիքի պաշտպանության գաղափարը, մարդկանց դաստիարակում էին հայրենիքին նվիրվածության, ժողովուրդների բարեկամության, արիության ոգով, օգնում էին հազարավոր մարդկանց զինվելու հաղթանակի նկատմամբ մեծ հավատով, համախմբում էին ժողովրդական զանգվածներին և օգնում նրանց կատարելու ռազմաճակատի պահանջների համար առաջադրանքները: Գրականության և արվեստի ոգեշունչ ստեղծագործությունները մարդկանց աշխատանքային և մարտական սխրագործությունների էին կոչում թե՛ ճակատում և թե՛ թիկունքում:

Հայ գրողների զգալի մասը թշնամու դեմ մղվող պայքարին մասնակցում էր ոչ միայն գրչով, այլև զենքը ձեռքին՝ որպես շարքային զինվորներ, հրամանատարներ և քաղաշխատողներ, բանակային ու ռազմաճակատային թերթերի զինվորական թղթակիցներ:

Պատերազմի առաջին ամիսներին Հայաստանի գրողները տեղի ունեցող իրադարձություններին արձագանքեցին հրապարակախոսական հոդվածներով, բանաստեղծություններով ու ակնարկներով, իսկ այնուհետև, անցան պատերազմի երևույթների խոր իմաստավորմանը, գեղարվեստական խոշոր ստեղծագործությունների կերտմանը: Պատերազմի տարիներին հայ գրականությունը զգալի նվաճումներ ձեռք բերեց գրական ստեղծագործությունների գրեթե բոլոր տեսակներում: Ստեղծվեցին մնայուն արժեքներ: Ավ.Իսահակյանի հրապարակախոսությունը, Դ.Դեմիրճյանի «Վարդանանք» և Ստ.Զորյանի «Պապ թագավորը» պատմավեպերը, Ն.Զարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգությունը և «Ձայն հայրենիքին» բանաստեղծությունը, Հր.Քոչարի,

Գ.Սարյանի, Հ.Շիրազի և մյուս գրողների ստեղծագործությունները հայ մարտիկներին կոչ էին անում գերմանական ֆաշիստների դեմ մարտնչել նույնպիսի հերոսությամբ ու արիությամբ, ինչպես հարազատ հողի համար մարտնչել էին իրենց մեծ նախնիները: Պատերազմի տարիներին ռազմաճակատում գտնվող հայ գրողները մշտապես կապ էին պահպանում հանրապետության հետ: Հաճախ էին ռազմաճակատ մեկնում հանրապետության հեղինակավոր պատվիրակություններ: Նրանց կազմում գտնվող գրողների ելույթները մեծ արձագանք էին ստանում ինչպես թիկունքի աշխատավորների, այնպես էլ ճակատային մարտիկների շրջանում, մասնավորապես հայկական ազգային դիվիզիաներում: Նաիրի Զարյանը հայ գրողների խմբի հետ միասին բազմիցս եղել է ռազմաճակատում: Պատերազմի հենց առաջին օրերին երևան եկավ նրա հիանալի բանաստեղծությունը՝ «Ուղերձ իմ ժողովրդին»: Որպես ահազանգ հնչեցին հայ դասական բանաստեղծության նահապետ Ավետիք Իսահակյանի բանաստեղծություններն ու հրապարակախոսությունը: «Ֆաշիզմը կոչնչացվի» հոդվածում, «Թռչունների երգը» բանաստեղծության մեջ, հրապարակախոսական ելույթներում բանաստեղծը թշնամու նկատմամբ հաղթանակի հաստատ համոզմունք էր հայտնում: Հանրապետությունում մեծ արձագանք գտավ Ավ.Իսահակյանի ցասումնալից «Ռազմակոչ» բանաստեղծությունը, որտեղ նա կոչ էր անում հայ ժողովրդին հայրենիքի սահմաններից թշնամուն «վանել հեռու», պաշտպանել հայրենիքը: Կովկասի պաշտպանողական մարտերի ահեղ օրերին բանաստեղծ Հովի. Շիրազը գրեց «Կովկասի երդումը» բանաստեղծությունը, որը նվիրված էր հայ զինվորին և գթության քույր ռուս աղջկան: Բանաստեղծ և արձակագիր Մկրտիչ Սարգսյանը պատմում է, որ 1944թ. Ուկրաինայի Կրասնի Լիման քաղաքի հոսպիտալում ինքը հանդիպել է մի հայ կապիտանի, որը սրբությամբ միշտ իր մոտ էր պահում Հովի.Շիրազի 1942թ. լույս տեսած «Երգերի գիրքը»:

Պատերազմի դաժան շնչով, հայրենիքին նվիրվածության զինվորական երդումներով և հանուն նրա կյանքը նվիրաբերելու պատրաստակամությամբ է համակված ռազմաճակատի տարբեր հատվածամասերում մարտնչող հայ գրողների ստեղծագործությունները: Թաթուլ Հուրյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Համո Սահյանը, Վահագն Դավթյանը, Գուրգեն Բորյանը, Սերո Խանզադյանը, Գևորգ Էմինը, Հրաչյա Քոչարը, Գարեգին Սևունցը և շատ

ուրիշներ մեծ ժառանգություն են թողել ռազմահայրենասիրական գրականության մեջ:

Պատերազմի այդ ծանր օրերին չէին դադարում հարավկովկասյան հանրապետությունների գրողների փոխայցելությունները: 1942թ. հուլիսին Հայաստան եկավ վրաց գրող Կ.Գամսախուրդիան և հանդիպումներ ունեցավ էջմիածնի, Հրազդանի և մի քանի ուրիշ շրջանների աշխատավորության հետ: 1942թ. սեպտեմբերին, Կովկասի վրա կախված ահեղ վտանգի օրերին, Բաքու մեկնեցին բանաստեղծներ Արազին, Գ.Սարյանը, Գ.Բորյանը, Ա.Վշտունին:

Պատերազմի տարիներին մեծ գործ կատարեցին արվեստի բնագավառի աշխատողները: Կինոգործիչները նկարահանում էին պատերազմի մասին կարճամետրաժ, գեղարվեստական և վավերագրական ֆիլմեր: Երևանի կինոստուդիայում ստեղծված խմբերը ռազմաճակատում նկարահանել են մի քանի հազար մետր կինոժապավեն: Մասնավորապես, նրանք նկարահանել են հայկական հրաձգային 89-րդ դիվիզիայի մարտական գործողությունները՝ սկսած Կովկասյան լեռնաշղթայից մինչև Բեռլին: Երևանի կինոստուդիան բազմաթիվ նկարահանումներ էր կատարել «Հայրենական պատերազմի մեկ օրը» և «Անդրկովկասն այսօր» ֆիլմերի համար: Հայաստանի վավերագրական ֆիլմերի մասնագետների մի խումբ, որի կազմի մեջ մտնում էին ռեժիսոր Գ.Բալասանյանը, օպերատորներ Ի.Պանովը, Ն.Սիմոնյանը և Գ.Խնկոյանը, բազմաթիվ ուղևորություններ կատարեց ռազմաճակատ, եղան բանակի գեներալ Ի.Խ.Բաղրամյանի, նավատորմի ծովակալ Ի.Ս.Իսակովի, փառաբանված օդաչու Նելսոն Ստեփանյանի մոտ: Ռեժիսոր Գ.Բալասանյանը և օպերատոր Գ.Խնկոյանը 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի գնդերի հետ միասին մասնակցեցին Բեռլինի գրոհին և հայկական դիվիզիայի մարտիկներին նկարահանեցին Բեռլինի Բրանդեն-բուրգյան դարպասի կամարների տակ և Ռայխստագի առջև հայկական «Քոչարի» պարելիս: Գ.Բալասանյանի խմբի վեց կիլոմետրանոց կինոժապավենի բազայի վրա ծնունդ առան «Բանակի գեներալը», «Նելսոն Ստեփանյան», «Ծովակալ Իսակով», «Հայ ժողովրդի զավակները Հայրենական մեծ պատերազմում», «Կիևից մինչև Բեռլին», «Հայրենի երկիր» և այլ վավերագրական ֆիլմեր: Պատերազմի տարիներին կինոմատոգրաֆիստների մեծ նվաճումն էր ռեժիսոր Ա.Բեկնազարյանի պատմահայրենասիրական «Դավիթ Բեկ» ֆիլմը:

Հիմնովին վերակառուցվեց թատերական կյանքը, խաղացանկը համապատասխանեցվեց պատերազմական պահանջներին, սկսեցին բեմադրվել ռազմաճակատում և թիկունքում խորհրդային մարդկանց հերոսական պայքարը արտացոլող ստեղծագործություններ, պատմական, հայրենասիրական, ժողովուրդների բարեկամությանը, նրանց համախմբմանը վերաբերող դրամաներ:

Հայ թատրոնի գործունեության այդ շրջանը հատկանշվեց «... միասնական հայրենասիրական պաթոսով, որ ուներ մի գերխնդիր՝ ժողովրդին համակել հաղթանակի հավատով: «Ամեն ինչ հաղթանակի համար» համաժողովրդական նշանաբանը նաև արվեստի, թատրոնի նշանաբանն էր»[1]: Բեմադրվեցին «Իվան Սուսանին», «Քյոռօղլի», «Դահիսի», «Օթելլո», «Աիդա», «Հուգենոտներ» օպերաները Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում, «Ֆելդմարշալ Կուտուզով», «Ռուս մարդիկ», «Ֆրոնտ», «Համլետ» դրամաները Գ.Սունդուկյանի անվան պետական դրամատիկական թատրոնում, «Վաղուց ի վեր», «Արշավանք», «Ֆրոնտ», «Կասկածելի ճշմարտություն» դրամաները Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկակակն թատրոնում, «Ցասում», «Զոյա», «Երևակայական հիվանդ» դրամաները պատանի հանդիսատեսի թատրոնում, «Ռուս մարդիկ», «Գևորգ Մարզպետունի», «Ինժեներ Սերգեև», «Երկիր հայրենի» բեմադրությունները Լենինականի պետական թատրոնում: Վերջինս պատերազմի տարիներին բեմադրել է 25 նոր դրամա[2]: Պատերազմի տարիներին հայկական թատրոնները բեմադրեցին այնպիսի նոր դրամաներ, ինչպես Նաիրի Զարյանի «Վրեժ», Գեղամ Սարյանի «Անտառի խորքում», Ալեքսանդր Արաքսմանյանի «Անտառները շարժվում են», Վաչե Հարությունյանի «Հայրենիքի դարպասների մոտ», Մարո Երզնկյանի «Տատյանա Բելկինա», Աշոտ Պապայանի «Բարձունք», Աշոտ Գրաշու «Ամպաբերդ», Խաչիկ Դաշտենցի «Տիգրան Մեծ» և այլ ստեղծագործություններ: Նաիրի Զարյանի «Վրեժ» դրամա, որը 1941թ. նոյեմբերի 7-ին բեմ հանեց թատրոնը՝ առաջին հակաֆաշիստական ստեղծագործություններից մեկն էր խորհդային դրամատուրգիայում: Պատերազմի տարիներին գրեթե բոլոր ռազմաճակատներում ելույթ էր ունենում հայ ականավոր դերասան Սուրեն Քոչարյանը: Նա ընթերցում էր հայրենասիրական ստեղծագործություններ,

---

[1] «Սովետական արվեստ» ամսագիր, 1972, №8, էջ 7:

[2] Հայրենական պատերազմի պատմության կաբինետի արխիվ, Ֆ. 275, գ. 17, թ. 24:

որոնց մեջ առանձնահատուկ տեղ էր գրավում «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսը:

Չնայած պատերազմի հետևանքով առաջացած տնտեսական սուղ պայմաններին, այդ տարիներին Հայաստանում հիմնադրվեցին՝ 1942թ. Երևանի երաժշտական կոմեդիայի թատրոնը (այժմ Հ.Պարոնյանի անվան), իսկ 1944թ.՝ թատերական ինստիտուտը: Շարունակվում էր հայ և մյուս ազգությունների դերասանների կապերը, փոխայցելությունները և հյուրախաղերը: 1942թ. օգոստոսին հայկական «Անուշ» օպերան բեմադրվեց Բաքվում, իսկ ադրբեջանական «Քյոռօղլի» օպերան՝ Երևանում: Երևանում բեմադրվեց վրացական «Դաիսի» օպերան և այլն: 1942 թվականին հյուրախաղերի այցով Երևան եկան Մոսկվայի Գեղարվեստական և Փոքր թատրոնների ականավոր դերասաններ Վ.Ի.Կաչալովը, Օ.Լ.Կլիպեր-Չեխովան, Մ.Մ.Տարխանովը, Ֆ.Վ.Շևչենկոն, Մ.Մ.Կլիմովը, Վ.Ն.Ուժովան և է.Սկուլսկայան:

Պատերազմի տարիներին հանրապետությունից արվեստի աշխատողների ստեղծագործական շատ խմբեր մեկնեցին ռազմաճակատ և համերգներ ու ելույթներ ունեցան մարտիկների շրջանում: Զինվորների շրջանում մեծ մասսայականություն էր վայելում Հայաստանի պետական ջազ նվագախումբը. Պատերազմի տարիներին նվագախումբը զորամասերում, հոսպիտալներում տվել է 410 համերգներ: Իրանի խորհրդային զորամասերում համերգներ տվեցին Հայֆիլհարմոնիայի երգի պարի անսամբլը, անվանի երգիչ Շարա Տալյանը: Հայաստանի արվեստի աշխատողների արհեստակցական միության հանրապետական կոմիտեն, ամփոփելով 1943 թվականի ընթացքում կատարած շեֆական աշխատանքի արդյունքները, նշում էր, որ «զինվորական շեֆական գերազանց աշխատանքի համար» Հայաստանի 200-ից ավելի արվեստի աշխատողներ արժանացել են ԽՍՀՄ Ժողկոմխորհին առընթեր արվեստի կոմիտեի և «Արվեստի աշխատող» միության Կենտկոմի պատվոգրերին: Հաշվետվության մեջ ասված է, որ արտագնա խմբերի ուժերով կազմակերպել է 2023 համերգ, իսկ մշտական դահլիճներում՝ 191 ներկայացում[3]: Պետական ջազ-նվագախումբը և ժողովրդական երգի ու պարի անսամբլը 20 համերգ են տվել ռազմաճակատի առաջավոր գծում՝ Թեոդոսիայի մատույցներում, և 22 համերգ՝ Անդրկովկասի ռազմաճակատի զորքերի Սևծովյան

---

[3] ՀՀ նորագույն պատմության պետ. կենտրոնական արխիվ, ֆ.67, ց. 3, գ.22, թ.5:

խմբում: Երգի ու պարի անսամբլը երեք ամսվա ընթացքում համերգներով հանդես էր եկել մերձռազմաճակատային գոտում և Հյուսիսային Կովկասի՝ զավթիչներից ազատագրված քաղաքներում: Հայաստանի արվեստի աշխատողների ուժերով զորամասերում անցկացվեցին գեղարվեստական ինքնագործունեության ստուգատեսներ: Կարևոր միջոցառում էր և այն, որ 1943 թվականի նոյեմբերի վերջին Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի ցուցումով Երևանում անցկացվեց զինվորական-շեֆական ակտիվի համաքաղաքային համաժողով, որտեղ ամփոփվեցին կատարած աշխատանքի արդյունքները և նախանշվեց հերթական միջոցառումների պլանը: Հենց այստեղ էլ զինվորական-շեֆական ակտիվ աշխատանքի համար պատվոգրեր հանձնվեցին 160 պարգևատրվածների:

1944 թվականի փետրվարին ռազմաճակատի Ղրիմի հատվածամաս մեկնեց հայկական ֆիլհարմոնիայի ռազմաճակատային խումբը՝ ռեժիսոր Առնոլդ Մարտիրոսյանի ղեկավարությամբ: Խմբի կազմում էին ճանաչված երգիչներ և դրամատիկական թատրոնների դերասաններ: Խումբը տվեց 30 համերգ, այդ թվում 7-ը՝ 89-րդ հայկական Թամանյան հրաձգային դիվիզիայում, 15-ը՝ ռազմաճակատի այլ միավորումներում և 8-ը՝ դաշտային հոսպիտալներում և զինվորական սանիտարական գնացքում: Ռազմաճակատային խմբի հաշվետվության մեջ, որը ներկայացվել էր Հայաստանի ղեկավարությանը, նկարագրված է, թե ինչպիսի ծանր ու վտանգավոր պայմաններում են տեղի ունեցել Հայաստանի արտիստների ելույթները: Պատերազմի տարիներին թշնամու դեմ հաղթանակը ապահովելու գործում իրենց համեստ ներդրումն ունեն նաև հայ կոմպոզիտորները: Նրանք ելույթներ էին ունենում ռազմաճակատային խմբերի կազմում, ստեղծում հայրենասիրական շատ երգեր, մարտական քայլերգեր: Բեղմնավոր կերպով էին աշխատում կոմպոզիտորներ Ա.Սաթյանը, Գ.Եղիազարյանը, Վ.Տալյանը, Ա.Մերանգուլյանը: Հերոսության և հայրենասիրության թեման մարմնավորվում էր նաև երաժշտական խոշոր ստեղծագործությունների մեջ: Այսպես, օրինակ, 1943թ. ստեղծված Արամ Խաչատրյանի Երկրորդ սիմֆոնիան, Դմիտրի Շոստակովիչի Յոթերորդ սիմֆոնիայի (ստեղծված պաշարված Լենինգրադում) և Սերգեյ Պրոկոֆևի Հինգերորդ սիմֆոնիայի հետ միասին խորհրդային երաժշտական արվեստի . խոշորագույն նվաճումներից մեկն էր պատերազմի ժամանակաշրջանում: Երևանի գեղարվեստական կյանքում նշանակալից

իրադարձություն էր խորհրդային մեծատաղանդ կոմպոզիտոր Դմիտրի Շոստակովիչի Յոթերորդ սիմֆոնիայի կատարումը (1942թ. հուլիսի 11 և 12)՝ 110 մարդուց կազմված միացյալ հայկական նվագախմբի կողմից (դիրիժոր՝ Միքայել Թավրիզյան) օպերայի և բալետի պետական թատրոնում: Պատերազմի այդ ծանր օրերին սիմֆոնիայի պարտիտուրան մեկ օրով Կույբիշևից բերվեց Երևան: Հաղթանակի այդ նոր սիմֆոնիան լսելու համար Երևան էին ժամանել Խորհրդային Միության մի շարք ականավոր արվեստագետներ (Ն.Յու. Մայակովսկին, Յու.Ա.Շապորինը, դաշնակահար Կ.Ն. Իգումնովը, դիրիժոր Ա.Վ.Գաուկը, պրոֆեսորներ Պ.Բ.Ռյազանովը, Վ.Վ.Նեչաևը, վրաց կոմպոզիտորներ Գ.Վ.Կիլաձեն, Շ.Մ.Մշվելիշեն, Ա.Բալանչիվաձեն, դիրիժոր Շ.Ի.Ազմայպարաշվիլին և ուրիշներ):

1944 թվականի սկզբին Մոսկվայում տեղի ունեցան համերգներ, որոնք Դրանց մասնակցեցին Հայկանուշ Դանիելյանը, Տաթևիկ Սազանդարյանը, Պավել Լիսիցյանը և ուրիշներ: Մոսկվայում անցան Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի երաժշտական արվեստի տասնօրյակները: Հարավային Կովկասի մշակութային կյանքում իրադարձություն էր երեք հանրապետությունների երաժշտության տասնօրյակը Թբիլիսիում, 1944 թվականի դեկտեմբերին: Տասնօրյակում Հայաստանը ներկայացնում էր Արամ Խաչատրյանի, Ս.Ստեփանյանի, Կ.Զաքարյանի, Կ.Եղիազարյանի, Է. Միրզոյանի, Ա.Բաբաջանյանի, Վ.Տալյանի և այլ կոմպոզիտորների ստեղծագործությունները:

Ակտիվորեն էին աշխատում Հայաստանի վրձնի վարպետները և քանդակագործները: Նրանք ստեղծում էին պատկերազարդ կարգախոսներ, հերոսների դիմանկարներ, «Մահ Ֆաշիզմին» թեմայով ծաղրանկարներ: Միայն 1943թ. զինվորական հրամանատարության առաջադրանքով Հայաստանի նկարիչները կատարեցին 1000-ից ավելի աշխատանք: Զորամասերում նրանք կազմակերպում էին ցուցահանդեսներ՝ «Հայաստանի նկարիչները Հայրենական պատերազմի օրերին»: Պատերազմի տարիներին զգալիորեն մեծացավ կերպարվեստի դերը և նշանակությունը: 1941-1945թթ. ընթացքում գործարանային և կոլտնտեսային ակումբներում, զորամասերում և նկարչի տանը կազմակերպվեցին հանրապետական 10 ցուցահանդես և ավելի քան 40 անհատական ու խմբային ցուցահանդեսներ: Նկարիչներ Ա.Չիլինգարյանը և Ս.Արտուչյանը 1944թ. կազմակերպեցին իրենց ծաղրանկարների և պլակատների միացյալ ցուցահանդես՝ «Կերպարվեստի համազարկ» ընդհանուր

անունով: Ուշագրավ է Դ.Նալբանդյանի «Գնդապետ Զաքյանի վերջին հրամանը» մեծակտավ պատկերը, ժողովրդական նկարիչ Մ.Սարյանի ծովակալ Հովհաննես Իսակովի, ակադեմիկոս Հովսեփ Օրբելու, կոմպոզիտոր Ա.Խաչատրյանի դիմանկարները և այլն:

Հայ անվանի նկարիչները այցելում էին աշխատավորական կոլեկտիվներ, զինվորական զորամասեր, քաջալերում մարտիկներին և աշխատավորությանը: Ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը 89-րդ հայկական դիվիզիայի մարտիկներին ուղղված նամակում գրում է. «...Մենք շարունակ մտածում ենք ձեր մասին, այն հսկայական դժվարությունների մասին, որոնք կանգնած են ձեր առջև: Մենք հպարտանում ենք ձեր արիությամբ, հայրենիքին անսահման նվիրվածությամբ, որի համար ձեզանից շատերը զոհում են ամենաթանկագին բանը, իրենց կյանքը:

Մենք խորապես համոզված ենք, որ ձեր վճռական ջանքերով դուք կմոտեցնեք վերջնական հաղթանակի ժամը թշնամու դեմ...[4]»:

Պատերազմի տարիներին Հայաստան տեղափոխվեցին նկարիչներ Դ.Նալբանդյանը, Ասլամազյան քույրերը, Լ.Գենչը (Գենչօղլյան), քանդակագործներ Գ.Կեպինյանը, Ս. Ստեփանյանը, Ն.Նիկողոսյանը և ուրիշներ, որոնք համալրեցին հանրապետության կերպարվեստագետների կոլեկտիվը: 1941թ. նոյեմբերի 5-ին ժամանակավորապես Երևան տեղափոխվեց նաև Թեոդոսիայից հայազգի աշխարհահռչակ ծովանկարիչ Հ.Այվազովսկու պատկերասրահը, որը 1942թ. հունիսին ցուցադրվեց: Մեծ նկարչի պատկերասրահը Երևան էր հասել մեկ ամսից ավելի ժամանակաընթացքում, բազմաթիվ փորձությունների ենթարկվել, և նրա փրկության համար արվեստասեր հասարակայնությունը պարտական է պատկերասրահի տնօրեն, նկարիչ Նիկոլայ Բարսամովին ու նրա կնոջը, որոնք տեղափոխում էին պատկերասրահը: Այն Երևանում մնաց մինչև 1944թ. հոկտեմբերի վերջը:

Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայաստանի գրականությունը և արվեստը իրենց արժանի ներդրումն ունեցան հաղթանակը ապահովելու գործում:

---

[4] «Գրական թերթ», 9 մայիսի 1974թ.: